ՊՈՊՈՒԼԻԶՄԻ ԵՎ ՑԻՆԻԶՄԻ՝ ՈՐՊԵՍ «ՆԵՂ» ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԼԵՎՈՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Իզմ-երը քաղաքականության անբաժան մասն են: Իզմ-երի միջոցով մենք պատկերում, բնութագրում, հասկանում, ուղղորդում և կոչում ենք քաղաքական գործընթացները (քաղաքական են բոլոր այն հասարակական գործընթացները, որոնք վերաբերում են հասարակական կյանքի կազմակերպմանն ուղղված որոշումների կայացմանը): Սովորաբար մարդիկ իզմ-երը նույնացնում են գաղափարախոսությունների՝ «մարդու և հասարակության բնույթի, ինչպես նաև հասարակական կյանքի կազմակերպման և նպատակների վերաբերյալ նորմատիվ (կարգաստեղծ) բնույթի գաղափարների ամբողջության»[1] հետ, ինչպես օրինակ՝ լիբերալիզմ (ազատականություն), կոմունիզմ (համայնավարություն), սոցիալիզմ (ընկերվարություն), էգալիտարիզմ (հավասարարություն), նացիոնալիզմ (ազգայնականություն) և այլն, որոնք քարտեզագրում են քաղաքական և ընդհանրապես հասարակական գործընթացները: Հարկ է նկատել, որ քաղաքական գործընթացները բնութագրող ոչ բոլոր իզմ-երն են լայն կամ դասական իմաստով գաղափարախոսություններ[2]: Օրինակ՝ պոպուլիզմ, ցինիզմ, էլիտարիզմ, տեխնոկրատիզմ և այլն: Սակայն, խնդիրն այն է, որ վերջիններս ժամանակակից ԶԼՄ-ներում, սոցիալական կայքերում և ընդհանրապես մեդիայում այնքան են կիրառվում, որ շատ հաճախ թյուրըմբռնման տեղիք են տալիս ոչ միայն քաղաքական գործընթացների ուսումնասիրությամբ զբաղվող տեսաբաններին, վերլուծաբաններին, փորձագետներին, այլև ընդհանրապես գործընթացներին հետևող «շարքային» քաղաքացիներին: Սրան հավելենք նաև այն, որ տեխնոլոգիապես հագեցած ժամանակակից աշխարհում տեսաբանները գործ ունեն տեղեկատվության, ակադեմիական հետազոտությունների, փորձագիտական կարծիքների այնպիսի քանակի հետ, որ արդեն առաջին հերթին կարևորվում է ոչ թե բուն գործընթացների, այլև այն հասկացութային պաշարի վերլուծությունը, որոնցով ճանաչվում, մեկնաբանվում և ուղ-

[1] **Sainsbury D.**, Swedish Social Democratic Ideology and Electoral Politics 1944–1948. A Study of the Functions of Party Ideology. Stockholm, 1980, p. 8.

[2] Տե՛ս **Freeden M.**, Ideology: A Very Short Introduction, Oxford University Press, Oxford, 2003, էջ 1:

ղորդվում են տեղի ունեցող գործընթացները։ Վերլուծության և պարզաբանման կարիք ունեցող նման իզմ-երից թերևս կարելի է առանձնացնել երկուսը, որոնցով առավել հաճախ են բնութագրում ինչպես հայաստանյան, այնպես էլ համաշխարհային քաղաքական գործընթացները հատկապես վերջին տարիներին։ Դրանք են՝ պոպուլիզմը և ցինիզմը։

Այս երկու իզմ-երի ուսումնասիրությունների մեջ ակնհայտ ընդհանրությունն այն է, որ երկուսն էլ վերջին կես դարի ընթացքում դարձել են մեդիայի կողմից քաղաքական գործընթացները բնութագրող ամենակիրառելի հասկացությունները։ Օրինակ՝ միայն ըստ անգլիական հայտնի «The Guardian» պարբերականի՝ վերջին քսան տարվա ընթացքում «պոպուլիզմ» և «պոպուլիստ» հասկացությունների կիրառումը նույն պարբերականի հրապարակումներում բազմապատկվել է ավելի քան տասը անգամ[3], իսկ Քեմբրիջի համալսարանի բառարանը «պոպուլիզմը» ճանաչել է 2017 թ. տարվա բառ[4]։ Թեև ցինիզմի տարածման վերաբերյալ չկան էմպիրիկ տվյալներ, այնուամենայնիվ սոցիալ-քաղաքական համաշխարհային և հայաստանյան իրողությունների դիտարկման շնորհիվ կարող ենք արձանագրել, որ նույնը վերաբերում է նաև ցինիզմին[5]։ Իսկ տարբերությունն այն է, որ եթե պոպուլիզմի վերաբերյալ առկա են ակադեմիական բազմաթիվ հետազոտություններ, ապա ցինիզմի մասին համապարփակ քաղաքագիտական, սոցիալ-փիլիսոփայական և քաղաքական-փիլիսոփայական հետազոտություններն ու ուսումնասիրությունները անհամեմատ քիչ են։ Այնուամենայնիվ, ինչպես պոպուլիզմի, այնպես էլ ցինիզմի խնդրի շուրջ մասնագիտական գրականությունում չկա համընդհանուր ընդունելության արժանացած գեթ մեկ սահմանում։ Առաջ անցնելով՝ նշենք, որ այս հոդվածի շրջանակներում կփորձենք համեմատական վերլուծության միջոցով պոպուլիզմը և ցինիզմը սահմանել որպես «նեղ» գաղափարախոսություններ։

Նախ սկսենք պոպուլիզմի սահմանումից։ Պոպուլիզմ բառի հիմքում ընկած է լատիներեն popularis-ժողովրդական բառը, ըստ այդմ՝ հայերեն բառարաններում առկա են պոպուլիզմի մի քանի թարգմանություններ, ինչպես օրինակ՝ «ժողովրդահաճություն», «ամբոխավարություն»[6] (սակայն մենք օգտագործելու ենք հենց «պոպուլիզմ» բառը)։ Խնդիրն այն է, որ պոպուլիզմով քաղաքական գործընթացներում բնութագրում են գրեթե ամեն ինչ՝ քաղաքական գործիչներին, գաղափարախոսությունները, քաղաքական ելույթները և այլն։ Այն մեկ դիտվում է որպես երկխոսության ոճ, մեկ՝ որպես տրամասություն, քաղաքական

---

[3] Տե՛ս https://www.theguardian.com/world/political-science/2018/nov/20/why-is-populism-suddenly-so-sexy-the-reasons-are-many, 05.04.2020

[4] Տե՛ս https://dictionaryblog.cambridge.org/2017/11/29/cambridge-dictionarys-word-of-the-year-2017/, 05.04.2020

[5] Տե՛ս **Stanley S.**, Retreat from Politics: The Cynic in Modern Times, Polity, Volume 39, Number 3, 2007, էջ 384։

[6] **Ա. Հայրապետյան**, Օտար բառերի բառարան, Եր., 2011, էջ 445։

ոճ, հռետորաբանություն և այլն[7]:

Այսօր ակադեմիական հանրությունում առավել տարածված է նիդերլանդացի քաղաքական փիլիսոփա Քաս Մուդի սահմանումը: Նա պոպուլիզմը սահմանում է որպես «նոսր» կամ «նեղ» գաղափարախոսություն (thin ideology), որի հիմքում ընկած է հասարակության երկու՝ միատարր և հակադիր բևեռների՝ «խեղճ ժողովրդի» և «կոռումպացված էլիտայի» բաժանման սկզբունքը, և որը քաղաքականությունը սահմանում է որպես ժողովրդի «համընդհանուր կամքի» արտահայտության միջոց[8]: Մուդի այս սահմանման հիմքում ընկած են հետևյալ չորս հայեցակարգերը՝ «նեղ գաղափարախոսություն», «ժողովուրդ», «էլիտա», «համընդհանուր կամք»[9]: Անդրադառնանք դրանցից յուրաքանչյուրին:

Փորձենք տարբերակել «նեղ» գաղափարախոսությունը «լայնից»: «Լայն» կամ «թանձր» գաղափարախոսությունից (thick ideology) «նեղ» գաղափարախոսությունը տարբերվում է նրանով, որ այն դասական իմաստով գաղափարախոսություն չէ, այսինքն՝ չի պատասխանում հասարակական կյանքի վերաբերյալ քաղաքական-փիլիսոփայական հիմնական հարցերին և չունի նորմատիվ բնույթ: «Նեղ», «նոսր» կամ «միկրո» գաղափարախոսությունները սոցիալ-քաղաքական առկա խնդիրների վերաբերյալ չեն ձևակերպում համապարփակ լուծման մեխանիզմներ[10]: «Լայն» կամ «թանձր» գաղափարախոսությունների հիմքում ընկած են երկու տեսակի գաղափարներ՝

ա) նկարագրական (descriptive), որոնք ներկայացնում են սոցիոմշակութային, սոցիալ-քաղաքական և սոցիալ-տնտեսական առկա վիճակը և պատասխանում են «ի՞նչ է մարդը», «ի՞նչ է հասարակությունը», «ինչպե՞ս են մարդիկ փոխհարաբերվում հասարակությունում» հարցերին,

բ) կարգաստեղծ կամ նորմատիվ (normative), որոնք արդեն պատասխանում են «ինչպիսի՞ն պետք է լինի հասարակական կյանքի կազմակերպումը», «ինչպե՞ս կառուցել արդար հասարակարգ», «ինչպե՞ս ձևավորել օրինական (լեգիտիմ) իշխանություն», «ի՞նչ պետք է անել հասարակությունը ավելի «լավը» և մարդկանց կյանքը ավելի բարեկեցիկ ու երջանիկ դարձնելու համար» քաղաքական-փիլիսոփայական հարցերին:

Ցանկացած «լայն» կամ «թանձր» գաղափարախոսություն (ազատականություն, համայնավարություն, ընկերվարություն և այլն) պատասխանում է այս հարցերին յուրովի: Օրինակ՝ ազատականությունը (լիբերալիզմ) պատմությունը մեկնաբանում է որպես ազատության և բռնատիրության միջև հակամարտության ընթացք (նկարագրական

---

[7] Տե՛ս **Mudde C.**, Populism: An Ideational Approach, The Oxford handbook of populism, Oxford University Press, Oxford, 2017, էջ 48:

[8] Տե՛ս **Mudde C.**, The populist zeitgeist, Government and Opposition, 39(3), 2004, էջ 543:

[9] Առավել մանրամասն տե՛ս **Mudde C.**, նշվ. աշխ., 2017, էջ 44-67:

[10] Տե՛ս **Freeden M.**, Ideology: A Very Short Introduction, Oxford University Press, Oxford, 2003, էջ 96:

բաղադրիչ) և կանխատեսում է մի աշխարհ, որտեղ բոլոր մարդիկ որոշակի անհավասարության գնով ազատ և խաղաղ կհամագործակցեն՝ կենտրոնացված կառավարման նվազագույն միջամտության պայմաններում (նորմատիվ բաղադրիչ)։ Համայնավարությունը (կոմունիզմ) պատմությունը մեկնաբանում է որպես տարբեր դասակարգերի միջև հակամարտության ընթացք և կանխատեսում է մի աշխարհ (նկարագրական բաղադրիչ), որտեղ բոլոր սոցիալական խմբերը կմիավորվեն կենտրոնացված սոցիալական համակարգի շուրջ, որն անգամ ազատության զոհաբերման գնով կերաշխավորի հավասարություն (կարգաստեղծ բաղադրիչ)[11]։ Ըստ սահմանման՝ և՛ ազատականությունը, և՛ համայնավարությունը լայն գաղափարախոսություններ են, քանի որ ունեն և՛ նկարագրական, և՛ կարգաստեղծ բաղադրիչներ։ Ի տարբերություն լայն գաղափարախոսությունների՝ նեղ գաղափարախոսությունները միայն նկարագրում են իրերի դրվածքը, այսինքն՝ ունեն միայն նկարագրական բաղադրիչ։ Այս համատեքստում պոպուլիզմը նույնպես սահմանվում է որպես «նեղ» գաղափարախոսություն։ Ըստ այդմ՝ այն նույնպես որոշակիորեն նկարագրում է տեղի ունեցող սոցիալ-քաղաքական, սոցիոմշակութային և սոցիալ-տնտեսական վիճակը, նկարագրում է քաղաքական գործընթացները և այլն, սակայն չունի կարգաստեղծ բաղադրիչ, այսինքն՝ չի առաջարկում լուծումներ։ Այդ է պատճառը, որ պոպուլիստական կարող են լինել բոլոր տեսակի «լայն» գաղափարախոսությունների անունից հանդես եկող քաղաքական գործիչները և նրանց քաղաքական տեքստերը։ Այս իմաստով պոպուլիստական կարող է լինել և՛ ազատականության, և՛ ազգայնականության (նացիոնալիզմ), և՛ ընկերվարության (սոցիալիզմ), և՛ գաղափարախոսական այլ դիրքերից հանդես եկող քաղաքական գործիչը։ Այսինքն, եթե «իրերի դրվածքը» նկարագրվում է այս կամ այն լայն գաղափարախոսությունների դիրքերից, սակայն դրա հետ կապված խնդիրների լուծումները չեն համընկնում նույն այդ գաղափարախոսության տրամաբանությանը, ապա սա առաջին պայմանն է, որ տվյալ քաղաքական գործչի ելույթներն ու գործունեությունը կոչենք պոպուլիստական։ Օրինակ՝ պոպուլիստ քաղաքական գործիչը կարող է իրականությունը նկարագրել ազատականության դիրքերից, սակայն լուծումներ առաջարկել ընկերվարության դիրքերից, ինչը խոսում է այն մասին, որ պոպուլիստ քաղաքական գործչի համար մեծ հաշվով կարևոր է ոչ թե իր գործունեության և ելույթների նկատմամբ հետևողականությունը, այլ առավելապես ժողովրդի (popularis) բարեհաճ վերաբերմունքին արժանանալը։ Ուստի եթե քաղաքական գործիչը որոշակի ժամանակահատվածի ընթացքում հանդես է գալիս մեկ ազատականության դիրքերից, մեկ ընկերվարության, մեկ կոսմոպոլիտիզմի, մեկ ազգայնականութ-

[11] Տե՛ս **Harrari Y. N.**, 21 Lessons for the 21st Century, London, 2018, էջ 11։

յան, մեկ համայնավարության դիրքերից, ապա այս սահմանման համատեքստում տվյալ քաղաքական գործչի ինչպես ելույթները, այնպես էլ նրա գործունեությունը կարող են ընկալվել որպես պոպուլիստական:

Պոպուլիզմի՝ որպես նեղ գաղափարախոսության սահմանման հաջորդ հայեցակարգը «ժողովրդի» գաղափարն է: Բոլոր այն քաղաքական գործիչների ելույթները, որոնց «մեղադրում» են պոպուլիզմի մեջ, հագեցած են «ժողովրդին» հղումներով: Սակայն այն հարցին, թե իրապես ինչ է նշանակում «ժողովուրդ», ոչ մի պոպուլիստ քաղաքական գործիչ չի տալիս միանշանակ պատասխան: Պայմանավորված սոցիոմշակութային, քաղաքական, սոցիալ-հոգեբանական համատեքստով՝ «ժողովուրդ» հասկացության սահմանումները պոպուլիստական քաղաքական գործիչների տեքստերում կարող են փոխվել: Ժողովուրդը կարող է ներկայացվել մեկ որպես ազգ, մեկ որպես դասակարգ, մեկ որպես այլ՝ «երևակայական հանրություն» (Անդերսոն):

Ըստ ամերիկացի քաղաքագետ Յան-Վերներ Մյուլլերի՝ «պոպուլիստ համարվելու համար պարտադիր, բայց ոչ բավարար պայման է էլիտաների հանդեպ քննադատական կեցվածքը»[12]: Բազմաթիվ այլ տեսաբաններ ևս կարծում են, որ պոպուլիստական քաղաքական տեքստերին բնորոշ է ժողովուրդ-էլիտա հակադրությունը: Սակայն ինչպես «ժողովուրդ» հասկացության սահմանման, այնպես էլ «էլիտայի» դեպքում անորոշ է մնում հստակ սահմանազատման հարցը: Հայերենում «էլիտա» եզրույթի ամենատարածված թարգմանություններն են «վերնախավ», «ընտրախավ», «ընտրանի» բառերը, որոնք երբեմն իմաստային առումով հակադրվում են իրար, քանի որ հասարակության «վերին շերտը» (նրանք, ովքեր ունեն հարստություն, իշխանություն, ազդեցություն և այլն) միշտ չէ, որ ընտրյալներ կամ արժանավորներ են[13]: Պետք է նշել, որ «էլիտա» հասկացությունը, կախված այն հանգամանքից, թե ինչ «լայն» գաղափարախոսության համատեքստում է կիրառվում, կարող է ունենալ տարբեր նշանակություններ: Օրինակ՝ եթե պոպուլիստը հանդես է գալիս ընկերվարության դիրքերից, ապա էլիտան կապիտալիստները կամ բուրժուաներն են, եթե պահպանողականության դիրքրերից, ապա՝ «առաջադեմներն» են, եթե ազատականության դիրքերից, ապա՝ «ավտորիտար ռեժիմն» է և այլն: Այսինքն՝ էլիտան պոպուլիստական մեկնաբանության դեպքում այն մարդկանց հավաքական անվանումն է, որը պոպուլիստը հակադրում է «հավաքական ժողովրդին»: Էլիտան նույնքան երևակայական հանրություն է, որքան ժողովուրդը: Այստեղ կարևորը հակադրության առկայությունն է: Եթե ժողովուրդը «հավաքական Մենք»-ն է, ապա էլիտան՝ «հավաքական Ուրիշ»-ը : Ե՛վ «հավաքական Ուրիշը», և՛ «հավաքական Մենքը» «երևա-

---

[12] **Յ. Վ. Մյուլլեր,** Ի՞նչ է պոպուլիզմը, Newmag, Եր., 2019, էջ 52:

[13] Տե՛ս **Մ. Պ. Պողոյան,** Էլիտայի սոցիոլոգիայի հիմնադրույթների և հիմնահարցերի սահմանումը, «Լրաբեր հասարակական գիտությունների», № 1 , Եր., 2014, էջ 224:

կայական հանրություններ» են։ Հարկ է նաև նկատել, որ պոպուլիզմի դեպքում ամեն կերպ հրեշացվում են «հավաքական Ուրիշ-ները», և ամեն կերպ մաքրագործվում են «հավաքական Մենք-երը»։ Այլ կերպ ասած՝ նրանք («հավաքական Ուրիշը»՝ էլիտան) «վատն» են, մենք («հավաքական Մենքը»՝ ժողովուրդը)՝ «լավը»։

Քաս Մուդի՝ պոպուլիզմի՝ որպես «նեղ» գաղափարախոսության սահմանման հիմքում ընկած չորրորդ հայեցակարգը վերաբերում է «համընդհանուր կամքին» (ռուսսոյական ոգով)։ Համընդհանուր կամքի հայեցակարգը սերտորեն կապված է ժողովրդի և էլիտայի հակադրության հայեցակարգի հետ։ Պոպուլիստներն իրենց քաղաքական ուղերձներում սովորաբար ներկայանում են որպես «ժողովրդի կամքի» («հավաքական Մենքի կամքի») ներկայացուցիչներ, որը նրանք հակադրում են էլիտաների («հավաքական Ուրիշի») «նեղ շահերին»։ Ընդ որում, հարկ է նկատել, որ այսպես կոչված «ժողովրդի կամքը» ներկայացնում է «համընդհանուրի կամքը», իսկ էլիտաներինը միշտ շահեր են՝ նեղ անձնական, մասնավոր շահեր։ Այս համատեքստում պոպուլիստները քաղաքականությանը հաղորդում են մեսիական բնույթ, այսինքն՝ քաղաքական գործընթացները ներկայացնում են կրոնական, առասպելական ուսմունքներին բնորոշ հասկացություններով, ինչպես օրինակ՝ «փրկիչ», «չար կամ սև ուժեր», «առաքելություն», «բարու հաղթանակ», «չարի վերջ» և այլն։ Կրոնական կամ առասպելական ուսմունքներին բնորոշ այս հասկացությունների կիրառումը կարծես թե «բարոյականացնում» է քաղաքականությունը։ Թվում է՝ ի՞նչ վատ է քաղաքականության բարոյականացումը։ Ամեն ինչ կլիներ կատարյալ, եթե բարոյականությունն ունենար օբյեկտիվ բնույթ, այսինքն՝ գոյաբանորեն կախված չլիներ քաղաքական սուբյեկտի մշակույթից, արժեհամակարգից, կրթվածությունից, կամքից կամ մեկնաբանությունից. այսինքն՝ պոպուլիստից պոպուլիստ բարոյականության, լավի և վատի, չարի և բարու, «փրկիչների» և «հրեշների» դերերը կարող են փոխվել։ Այնուհետև բարոյականության բացարձակացումը մերժում է բազմազանության և բազմակարծության հնարավորությունը, քանի որ եթե բարոյականը մեկն է, ուրեմն ճշմարիտն էլ մեկն է, ուրեմն քաղաքական գործիչը կա՛մ «ճշմարիտ» է, կա՛մ՝ «սխալ», կա՛մ «սպիտակ» է, կա՛մ՝ «սև»։

Քաս Մուդի՝ վերը ներկայացված պոպուլիզմի սահմանումը (որպես «նեղ» գաղափարախոսություն) քննադատվել է մի շարք հետազոտողների կողմից, որոնք կարծում են, որ շատ ավելի կարևոր է գնահատման ենթակա քաղաքական տեքստի ենթատեքստի ու համատեքստի ուսումնասիրությունը, որպեսզի կարողանանք հասկանալ՝ գործ ունենք պոպուլիզմի՞, թե՞ մեկ այլ երևույթի հետ։ Որոշ հետազոտողներ էլ կարծում են, որ պոպուլիզմը ընդհանրապես պետք է դիտարկել ոչ թե որպես գաղափարախոսություն, այլ, օրինակ, «դիսկուրսիվ շրջանակ», որը կարելի է հասկանալ որպես տեքստում առկա լեզ-

վի, կիրառվող հասկացությունների, համատեքստի, ենթատեքստի ամբողջություն[14]: Այնուամենայնիվ, պոպուլիզմի՝ որպես նեղ գաղափարախոսության դիտարկումը հնարավորություն է տալիս գիտականորեն՝ էմպիրիկ մակարդակում չափելու և գնահատելու այս կամ այն քաղաքական գործչի կամ նրա տեքստի պոպուլիստական լինելը: Բանն այն է, որ գնահատման ենթակա տեքստից դուրս ցանկացած այլ վերլուծության դեպքում մենք պետք է կարողանանք պարզել, թե համատեքստը որն է, ինչը խիստ կողմնակալ մեկնաբանության հարց է:

Պոպուլիզմի՝ որպես «նեղ» գաղափարախոսության սահմանումը գիտական տեսանկյունից արժեքավոր է նաև այն իմաստով, որ այդ մեթոդաբանության միջոցով կարելի է մեկնաբանել նաև ժամանակակից մեդիայում և քաղաքական դաշտում լայն տարածում գտած մեկ այլ երևույթը՝ ցինիզմը: Ինչպես պոպուլիզմի, այնպես էլ ցինիզմի միջոցով բնութագրվում են այս կամ այն քաղաքական գործիչները, նրանց ելույթներն ու գործունեությունը: Ինչպես պոպուլիզմի, այնպես էլ ցինիզմի հիմքում ընկած են սոցիալական իրականությունը նկարագրող որոշակի գաղափարներ: Երկուսն էլ չեն տեղավորվում որևէ «լայն» գաղափարախոսության շրջանակներում: Ինչպես պոպուլիզմը, այնպես էլ ցինիզմը չեն առաջարկում սոցիալական խնդիրների իրատեսական և հետևողական լուծումներ, այսինքն՝ չունեն կարգաստեղծ բաղադրիչ: Ե՛վ պոպուլիստական, և՛ ցինիկ կարող են լինել տարբեր գաղափարախոսությունների դիրքերից հանդես եկող քաղաքական գործիչները, նրանց ելույթները և գործունեությունը: Ուստի այս ընդհանրությունները մեզ հիմք են տալիս եզրակացնելու, որ ցինիզմը, ինչպես և պոպուլիզմը, կարելի է դիտարկել որպես «նեղ» գաղափարախոսություն:

Այստեղ հարկ է հստակեցնել՝ ո՞ւմ ցինիզմի մասին է խոսքը, քանի որ մեկ այլ բան է, երբ քաղաքական գործչի գործունեությունն ենք որակում որպես ցինիզմ, մեկ այլ բան է, երբ քաղաքական տեքստն ենք որակում որպես ցինիզմ, և մեկ այլ բան է, երբ, օրինակ, քաղաքականության պասիվ մասնակիցների՝ ընտրողների վարքն ենք որակում որպես ցինիզմ: Ի սկզբանե նկատենք, որ խոսքն այստեղ գերազանցապես քաղաքական տեքստի մասին է: Քաղաքական գործչի կամ ընտրողի վարքին իրապես օբյեկտիվ գնահատական տալը գրեթե անհնար է, քանի որ դրա համար պետք է տիրապետել ոչ միայն քաղաքականության բեմահարթակում ընթացող բաց քաղաքական գործընթացներին, այլև քաղաքական ետնաբեմի գործընթացներին, ինչը գրեթե միշտ քողարկված է լինում և դժվար հասանելի, ուստի չմոլորվելու և օբյեկտիվ լինելու համար պետք է հետազոտել այն, ինչ հասանելի է: Այս դեպքում հասանելի են քաղաքական գործիչների հրապարակային տեքստերը, նրանց հարցազրույցները, ելույթները և այլն: Ուստի քիչ թե շատ գի-

[14] Տե՛ս **Aslanidis P.**, Is Populism an Ideology? A Refutation and a New Perspective, Political Studies, Yale University, 2015, էջ 11:

տականորեն անկանխակալ գնահատել կարելի է միայն տեքստը, քանի որ այն ավելի քիչ է կախված հետազոտողի մեկնաբանությունից:

Ցինիզմը հայերեն բառարաններում հիմնականում մեկնաբանվում է որպես՝ ա) ցինիկների ուսմունք, բ) լկտի, արհամարհական վերաբերմունք, գ) անպատկառ արարք, դ) անպատկառ խոսք[15]: Սակայն քաղաքական դաշտում ցինիզմը միայն հիշյալ սահմանումներով չի սահմանափակվում: Բանն այն է, որ «ցինիզմ» հասկացությունն արդեն շատ երկար ժամանակ է, ինչ կիրառվում է արդի փիլիսոփայական, մասնավորապես քաղաքական-փիլիսոփայական ուսումնասիրություններում, և դրանով այն ներկայացվում է ոչ միայն որպես վարքի կամ վերաբերմունքի ձև, այլև աշխարհայացքի տեսակ (Մ. Կոլտկո--Ռիվերա), կեղծ գիտակցության ձև (Պ. Սլոտերդայկ), հետգաղափարախոսական հասարակության գաղափարախոսություն (Ս. Ժիժեկ), մշակութային վիճակ (Շ. Սթենլի) և այլն: Ակադեմիական շրջանակներում ցինիզմի ամենատարածված սահմանման հեղինակը գերմանացի ժամանակակից փիլիսոփա Պետեր Սլոտերդայկն է, որը այն բնորոշում է որպես «լուսավորված կեղծ գիտակցություն. արդիականացված դժբախտ գիտակցություն»[16]: Սլոտերդայկի այս սահմանումն ունի մշակութային, քաղաքակրթական և սոցիալ-քաղաքական փոխակերպումների հստակ համատեքստ: Ցինիզմ ասելով նա նկատի ունի վերածննդի, լուսավորականության և նոր շրջանի փիլիսոփայության գաղափարական իդեալներից ժամանակակից հասարակություններում տարածվող հիասթափության ալիքի հետևանքով վերաբերմունքի, աշխարհայացքի տեսակը: Որոշ հետազոտողներ ցինիզմի տարածումը կապում են նաև քաղաքականությունից և քաղաքական ինստիտուտներից հասարակության հիասթափության հետ[17], ոմանք էլ՝ «գաղափարախոսությունների ճգնաժամի» հետ (Ս. Ժիժեկ): Սակայն նրանց բոլորի մոտեցումներում ընդհանրականն այն է, որ գրեթե բոլորը ցինիզմի հիմքում դնում են որոշակի գաղափարների ամբողջություն: Եվ այս դեպքում կարևոր չէ, թե մենք այդ գաղափարների ամբողջությունը կանվանենք աշխարհայացք, գաղափարախոսություն, թե մշակութային վիճակ: Մասնավորապես, մեզ հետաքրքրում են այն հարցերը, թե «ինչ գաղափարներ են ընկած ցինիզմի հիմքում», և «որքանով է այդ գաղափարների ամբողջությունը համեմատելի պոպուլիզմի՝ որպես «նեղ գաղափարախոսության» գաղափարների հետ», և, վերջապես, «ինչ ընդհանրություններ և տարբերություններ կան ցինիզմի և պոպուլիզմի միջև»: Ավելացնենք նաև, որ սույն հոդվածի շրջանակներում մեզ հետաքրքրում է ցինիզմի քաղաքական բաղադրիչը և մենք գերազանցապես ուսումնա-

---

[15] Տե՛ս **Ա. Հայրապետյան,** Օտար բառերի բառարան, էջ 583:

[16] **Слотердайк П.**, Критика цинического разума, АСТ, М., 2009, с. 333.

[17] Տե՛ս **Stanley S.**, Retreat from Politics: The Cynic in Modern Times, Polity, Volume 39, Number 3, 2007, էջ 384:

սիրելու ենք քաղաքական ցինիզմը։

Ընդհանրացնելով մասնագիտական գրականությունում առկա սահմանումները՝ քաղաքական ցինիզմը կարելի է դիտարկել որպես «նեղ» գաղափարախոսություն, ըստ որի՝ հասարակությունը բաղկացած է միայն սեփական շահը հետապնդող անհատներից, և ըստ այդմ՝ քաղաքական դաշտում գոյություն ունի երկու խումբ՝ «լռող կամ անտարբեր մեծամասնությունը» և «իրենց տնտեսական, սոցիալական նեղ շահերը գիտակցող ակտիվ փոքրամասնությունը», իսկ այս կամ այն գաղափարախոսությունները քողարկում են իրերի իրական դրվածքը՝ այդպիսով ծառայելով որպես գործիք «ակտիվ փոքրամասնության» կողմից «լռող մեծամասնությանը» շահագործելու, մանիպուլացնելու և ղեկավարելու համար։ Ըստ այդմ՝ ցինիզմի հիմքում ընկած են հետևյալ հիմնական հայեցակարգերը՝ «լուռ, անտարբեր մեծամասնություն», «նախահարձակ, ակտիվ փոքրամասնություն», «իրականությունը քողարկող գաղափարախոսություն», մասնակցայնության և ներկայացուցչության մերժում, քաղաքականության մաքիավելիական պատկերում։

Նախ սկսենք գաղափարախոսության սահմանումից ցինիզմի դիրքերից։ Սլոտերդայկը կարծում է, որ ցինիզմը՝ որպես «լուսավորյալ կեղծ գիտակցության տեսակ», ի հայտ է գալիս այն դեպքերում, երբ միևնույն երևույթների վերաբերյալ առկա են առնվազն երկու հնարավոր հակադիր պատկերացումներ՝ «պաշտոնական» և «ոչ պաշտոնական», քողարկված և մերկացված[18], և ըստ այդմ ցինիզմի խնդիրը իրերի «քողարկված» դրվածքը մերկացնելն է։ Եվ, ինչպես արդեն նշվեց, «ցինիկ գիտակցության» տարածվելը ժամանակակից հասարակություններում Սլոտերդայկը կապում է գաղափարախոսություններից հիասթափվելու հետ։ Այսինքն՝ մարդիկ, նկատելով գաղափարախոսության նկարագրական և կարգաստեղծ գաղափարների «իրականությունից կտրվածությունը», հիասթափվում են այդ գաղափարախոսությունից՝ այն ենթարկելով մերկացնող քննադատության։ Անշուշտ, Սլոտերդայկի նման պնդումը հնարավոր չէ ստուգել, սակայն այստեղ էականն այն է, որ գաղափարախոսությունը դիտարկվում է որպես իրականությունը քողարկող, աղճատող, դիմակավորող երևույթ։ Շարունակելով Սլոտերդայկին՝ ժամանակակից սլովենացի փիլիսոփա Ս. Ժիժեկը գտնում է, որ ցինիզմը նույնպես գաղափարների համակարգ է, ըստ որի՝ ցանկացած գաղափարախոսություն կտրված է «իրականությունից», և գաղափարախոսության դերը իրականության քողարկումն է[19]։ Ցինիկ քաղաքական գործչի համար էական չէ, թե իր հրապարակային ելույթներում ինքը որ գաղափարախոսության դիրքերից է հանդես գալիս. չէ՞

[18] Տե՛ս **Sloterdijk P**., Critique of Cynical Reason, University of Minnesota Press, Minneapolis, 1987, էջ 22։

[19] Տե՛ս **Zizek S**., Mapping Ideology, New York, 1994, էջ 312։

որ բոլոր գաղափարախոսությունները «կեղծ գիտակցության» տեսակներ են, նրանք չեն արտացոլում իրականությունը, նրանք չունեն կյանքի կոչվելու իրական հնարավորություններ, նրանց միակ գործառույթն իրականությունը քողարկելն է: Այս դեպքում ընդհանրապես մերժվում է գաղափարախոսությունների կարգաստեղծ, նորմատիվ բաղադրիչը, ուստի, օրինակ, քաղաքական նպատակահարմարությունից ելնելով՝ «երդվյալ պահպանողականը» կարող է հանդես գալ որպես «առաջադեմ ազատական», իսկ «ազատականը»՝ որպես «ավանդական արժեքների պահապան»: Ցինիկ քաղաքական գործչի պատկերացմամբ՝ այն, ինչ հնչում է քաղաքական բեմահարթակից, ընդամենը քող է, որը քողարկում է քաղաքականության մաքիավելիական բնույթը: Ժիժեկը որպես օրինակ ներկայացնում է ստալինյան շրջանի Խորհրդային Միության հասարակությունը, որտեղ, ըստ նրա, ոչ ոք իրապես չէր հավատում «ստալինիզմին», և բոլորը ցինիկաբար էին վերաբերվում իշխող գաղափարախոսությանը, սակայն բոլորը ձևացնում էին, թե իբր սոցիալիզմ (ընկերվարություն) են կառուցում և հավատարիմ են կուսակցությանը[20]: Այլ կերպ ասած՝ ցինիկը քաջատեղյակ է գաղափարախոսական դիմակի և սոցիալական իրականության միջև հեռավորության մասին, սակայն շարունակում է կրել այդ գաղափարախոսական դիմակը[21]:

Քաղաքական-փիլիսոփայական տեսանկյունից և սույն հոդվածի նպատակներից ելնելով՝ առավել էական է հարցի այն կողմը, որը վերաբերում է քաղաքական գործիչների՝ տեքստերի, գործունեության որակումներին: Այսինքն՝ մեզ հետաքրքրում է, թե որ դեպքերում կարելի է քաղաքական գործչի գործունեությունը կամ ելույթները որակել «ցինիզմ»: Կարելի է ենթադրել, որ այն դեպքերում, երբ քաղաքական գործիչը, չհավատալով իր ասածներին կամ խոստումներին, հրապարակավ շարունակում է հասարակական կյանքի բարելավման վերաբերյալ ելույթներ ունենալ: Սակայն այս պնդումը ստուգելի չէ առնվազն երկու կետով: Նախ դժվար է ստուգել, թե քաղաքական գործիչն իրապես հավատում է իր ասածներին, թե ոչ, այնուհետև՝ եթե անգամ չի էլ հավատում իր ասածներին, ապա այդ երևույթը կարելի է պարզապես կոչել ստախոսություն: Ասվածի համատեքստում կարող ենք եզրակացնել, որ այն դեպքերում, երբ քաղաքական գործիչը իր ելույթներում հրապարակավ ժխտում է գերակա համարվող գաղափարախոսության կամ արժեհամակարգի (տվյալ դեպքում՝ ժողովրդավարության) հիմնադրույթներից երկուսի սկզբունքային անիրագործելիությունը, սակայն շարունակում է կոչեր անել, որ մարդիկ մասնակցեն ընտրություններին, և ինքն էլ գործում է ժողովրդավարության խաղի կանոնների (պրոցեդուրալիզմի, ընտրությունների ևն) շրջանակներում, ապա այս կետով նրա գործունեությունը կամ ելույթները կարելի է կոչել «ցինիզմ»:

---

[20] Տե՛ս **Zizek S.**, The Sublime Object of Ideology, New York, 1989, էջ 225:

[21] Տե՛ս **Zizek S.**, Mapping Ideology, էջ 159:

Գաղափարախոսության նման հոռետեսական մեկնաբանությունից բխում է ազատական ժողովրդավարության գաղափարախոսության հիմնասյուներ համարվող սկզբունքների՝ մասնակցայնության և ներկայացուցչության մերժումը ցինիզմի դիրքերից: Տեղին է հիշել բրիտանացի սոցիոլոգ Զ. Բաումանի նկատառումը առ ժողովրդավարական հասարակություններին բնորոշ մի պարադոքսը, ըստ որի՝ «արդի արևմտյան ժողովրդավարական հասարակություններում, որտեղ մարդիկ իրենց հպարտորեն ներկայացնում են որպես ժողովրդավարական և ազատ, բայց միևնույն ժամանակ չեն հավատում, որ կարող են ազդեցություն ունենալ քաղաքական փոփոխությունների վրա»[22]: Այսինքն՝ ստացվում է այնպես, որ ազատական-ժողովրդավարական հռչակված քաղաքական համակարգերում մարդիկ չեն հավատում հասարակական-քաղաքական կյանքի այլընտրանքային կազմակերպման հնարավորությանը, ինչը նրանց հաճախ հանգեցնում է այն համոզմանը, որ քաղաքական գործընթացներին մասնակցությունը անիմաստ և անօգուտ է ի սկզբանե: Թերևս դրա մասին կարող են վկայել բոլոր ժողովրդավարական երկրներում ընտրություններին մասնակցության մակարդակը, որը շատ հազվադեպ է անցնում ընտրողների թվի վաթսուն տոկոսից[23]: Այս է պատճառը, որ որոշ հետազոտողներ կարծում են, որ ցինիզմը քաղաքական ինստիտուտներից և քաղաքական ուժերի գործունեությունից հիասթափության հետևանք է[24]: Ներկայացուցչության և մասնակցայնության սկզբունքների ժխտման վրա են կառուցված ցինիզմի՝ որպես «նեղ» գաղափարախոսության երկու հիմնական՝ «լռող մեծամասնության» և «ակտիվ փոքրամասնության» հայեցակարգերը:

Մինչ «լռող մեծամասնության» և «ակտիվ փոքրամասնության» հայեցակարգերի վերլուծությանն անցնելը հարկ է ցինիզմը տարբերակել էլիտիզմից, մերիտոկրատիայից և տեխնոկրատիայից: Եթե էլիտիստական, տեխնոկրատական կամ մերիտոկրատական գաղափարախոսությունների համաձայն քաղաքական որոշումները պետք է կայացնեն արժանավորները, փորձագետները կամ տեխնոկրատները, ապա ցինիզմի դեպքում նման կարգաստեղծ խնդիր չի դրվում: Ցինիզմի դիրքերից ընդհանրապես քաղաքական որոշումների կայացմանը մասնակցում են ոչ թե արժանավորները, ընտրյալները, ժողովուրդը, քաղաքացիները, տեխնոկրատները կամ սոցիալական այլ խավի ներկայացուցիչները, այլ նրանք, ովքեր, մասնակցելով քաղաքական խաղին («ակտիվ փոքրամասնությունը»), հայտնվել են որոշում կայացնողների՝ իշխանություն ունեցողների դիրքերում: Իրականում այստեղ երևվում է ներկայացուցչության սկզբունքի թերությունը: Բանն այն է, որ ներկայացուցչական ժողովրդավարության դեպքում այսպես կոչված՝

[22] **Bauman Z.**, In Search of Politics, Polity, Oxford, 1999, p. 1.
[23] Տե՛ս https://www.idea.int/data-tools/question-view/437, 21.04.2020
[24] Տե՛ս **Mazella D.**, The Making of Modern Cynicism, Charlottesville, 2007, էջ 224:

«ժողովրդի կամքը» ներկայացնում են այն քաղաքական գործիչները, որոնք ընտրվել են մեծամասնության կողմից։ Սակայն, արդյո՞ք «ընտրյալները» ընտրվելուց հետո իրենց գործունեության ընթացքում ներկայացնում են «ժողովրդի կամքը», արդյո՞ք ընդհանրապես ձևակերպելի է «ժողովրդի կամք» ասվածը. սրանք հարցեր են, որոնք դեռևս անպատասխան են, ինչը քաղաքական գործիչներին բազմաթիվ շահարկումների տեղիք է տվել և տալիս։ Ըստ նպատակահարմարության՝ այս կամ այն քաղաքական գործիչները իրենց օգտին են մեկնաբանել հասարակության մեծամասնության անտարբեր կեցվածքը քաղաքական այս կամ այն իրադարձությունների վերաբերյալ։ Հասարակության մեծամասնությանը ներկայացնելով որպես «լռող մեծամասնություն»՝ իշխանություն ունեցող որոշ գործիչներ պարզապես այդ «լռությունը» մեկնաբանել են որպես իրենց գործունեության նկատմամբ համաձայնության նշան։ Օրինակ՝ ԱՄՆ 37-րդ նախագահ Ռ. Նիքսոնը 1968 թ. վիետնամական պատերազմի շուրջ ուսանողական ընդվզումների ժամանակ հայտարարել էր, որ աղմուկ է բարձրացնում միայն «ակտիվ և ագրեսիվ փոքրամասնությունը», մինչդեռ «լռող մեծամասնությունը» համաձայն է ԱՄՆ-ի վարած քաղաքականությանը[25]։ Նիքսոնի այս հայտարարությունը կարող է իսկապես արժանահավատ թվալ. չէ՞ որ եթե իսկապես մարդիկ անհամաձայն լինեին նրա քաղաքականությանը, ապա կբարձրաձայնեին իրենց բողոքը, կընդվզեին և այլն։ Սակայն իրականում հասարակության մեծամասնության «լռությունը» կարող է պայմանավորված լինել տարբեր հանգամանքներով, օրինակ՝ անտեղյակությամբ, ընդվզման անկարողությամբ, կոմպետենցիայի ցածր մակարդակով և այլն։ Մինչդեռ քաղաքական գործընթացների ցինիկ մեկնաբանության դեպքում հաշվի չեն առնվում այս հանգամանքները։

Այսպիսով՝ մենք կարող ենք նկատել, որ ցինիզմի և պոպուլիզմի՝ որպես «նեղ» գաղափարախոսությունների հիմքում ընկած են մի շարք ընդհանրություններ։ Առաջինն այն է, որ երկու դեպքում էլ քաղաքական գործընթացներից օտարվում է կարգաստեղծ բաղադրիչը, այսինքն՝ երկու դեպքում էլ նկարագրվում է իրերի դրվածքը, սակայն չեն առաջարկվում կարգաստեղծ լուծումներ։ Երկրորդ ընդհանրությունն այն է, որ երկու «նեղ» գաղափարախոսություններն ըստ էության մերժում են քաղաքական գործընթացներում քաղաքացիների մասնակցայնության սկզբունքը. պոպուլիզմի դեպքում երկրորդական, պասիվ դեր է տրվում «ժողովրդին», որը կարող է միայն հետևել իր առաջնորդին, իսկ ցինիզմի դեպքում սկզբունքորեն ժխտվում է մասնակցայնության հնարավորությունը։ Երրորդ ընդհանրությունը վերաբերում է ցինիզմի և պոպուլիզմի տարածման քաղաքական համատեքստին։ Երկու դեպքն էլ լայնորեն կիրառվում է այն հասարակություններում, որտեղ

[25] Տե՛ս **King A.A., Anderson F.D.,** Nixon, Agnew, and the "Silent Majority": A Case Study in the Rhetoric of Polarization, Western Speech, 35:4, 1971, էջ 243։

առկա են քաղաքական ինստիտուտների և ընդհանրապես քաղաքականության նկատմամբ անվստահության բարձր մակարդակ, ինչը հասարակության շրջանում կարող է հանգեցնել կա՛մ ավանդական-դասական պոպուլիզմի, կա՛մ էլ ցինիզմի, որին հաջորդում է այսպես կոչված «ձեռնարկատիրական պոպուլիզմը»[26]: Երկու «նեղ» գաղափարախոսություններն էլ քաղաքականությունը դիտարկում են մաքիավելիական ոգով՝ այդպիսով սպառնալով քաղաքական ինստիտուտների, ժողովրդավարական ինստիտուտների և գործընթացների նկատմամբ հասարակության վստահությանը և հավատին: Մասնավորապես, պոպուլիզմը հաճախ դիտարկվում է որպես ժողովրդավարությանը, ավելի կոնկրետ՝ ազատական ժողովրդավարությանը սպառնացող երևույթ[27], իսկ ցինիզմը դիտարկվում է որպես քաղաքական ինստիտուտների նկատմամբ վստահությանը, հուսալիությանը սպառնացող երևույթ[28]:

Պոպուլիզմի և ցինիզմի գաղափարական հիմքերում ընկած են նաև մի շարք տարբերություններ: Եթե պոպուլիստական «նեղ» գաղափարախոսությունը քաղաքական գործընթացները ներկայացնում է խիստ բարոյագիտական հասկացություններով («չարի և բարու հակադրություն», «հավաքական Ուրիշի դեմ պայքար» և այլն), ապա ցինիկ «նեղ» գաղափարախոսությունը քաղաքականությունից օտարում է բարոյագիտական հասկացությունները: Եթե պոպուլիզմի դեպքում գործ ունենք «երևակայական հանրույթների» հակադրության հետ («ժողովուրդ-էլիտա», «Մենք-Ուրիշները»), որոնց բաժանման հիմքում մի կողմի բարոյականացումն ու մյուս կողմի հրեշացումն է, ապա ցինիզմի դեպքում՝ «ակտիվ փոքրամասնության» և «լռող մեծամասնության» հակադրության հետ, որոնց բաժանման հիմքում նեղ անհատական շահի գիտակցումն է: Եթե պոպուլիզմի դեպքում քաղաքական գործընթացներին հաղորդվում է մեսիական բնույթ, ապա ցինիզմը քաղաքականությունը դիտարկում է որպես խաղ: Այս համատեքստում որոշ հետազոտողներ կարծում են, որ պոպուլիստական ուղերձների մերկացումը հանգեցնում է քաղաքական ցինիզմի տարածմանը[29]: Կարելի է պնդել նաև հակառակը:

Թեև բազմաթիվ հետազոտողներ կարծում են, որ պոպուլիզմը և ցինիզմը ժխտում են ազատական ժողովրդավարության գաղափարախոսական հիմքերը, պետք է նկատել, որ այդ «նեղ» գաղափարախո-

---

[26] Տե՛ս **Fieschi C., Heywood P.,** Trust, cynicism and populist anti-politics, Journal of Political Ideologies, Nottingham, 2006, էջ 292:

[27] Տե՛ս **Albertazzi, D., S. Mueller**, "Populism and liberal democracy: populists in government in Austria, Italy, Poland and Switzerland," Government and Opposition, 48(3), 2013, էջ 71:

[28] Տե՛ս **Rijkoff A.M.**, The Dark Side of Politics: Kynicism, Cynicism and Political Behavior, Annual meeting of the International Society of Political Psychology, Paris, 2008, էջ 6-7:

[29] Տե՛ս **Rooduijn, M., van der Brug, W., de Lange, S.L., Parlevliet, J.**, Persuasive Populism? Estimating the Effect of Populist Messages on Political Cynicism, Politics and Governance, 2017, Volume 5, Issue 4, էջ 138:

սությունները առաջին հերթին ժխտում են քաղաքականության և քաղաքական գործընթացների կարգաստեղծ բաղադրիչը, ընդ որում նրանցից յուրաքանչյուրը նշվածն իրագործում է յուրովի տրամաբանությամբ: Պոպուլիզմը քաղաքական գործընթացներից դուրս է մղում բազմակարծության, երկխոսության, հակակշիռների ինստիտուտների, կառուցողական քննադատության տարրերը, իսկ ցինիզմը ժխտում է քաղաքական գործիչների գործունեության ալտրուիստական, հանրանշանակալիության, կառուցողական մղումները: Թեև երկու «նեղ» գաղափարախոսություններն էլ գեղագիտական տեսանկյունից կարող են գրավիչ և ընկալելի թվալ, սակայն հանրության շահերին ծառայող քաղաքականության տեսանկյունից սնանկ են:

Բանալի բառեր - *գաղափարախոսություն, «լայն» գաղափարախոսություն, «նեղ» գաղափարախոսություն, պոպուլիզմ, ցինիզմ, էլիտա, ժողովուրդ, «լռող մեծամասնություն»*

ЛЕВОН БАБАДЖАНЯН – *Сравнительный анализ определений популизма и цинизма как «узких» идеологий.* – В статье популизм и цинизм рассматриваются как «узкие» типы идеологии. В основе «широких» идеологий, таких как либерализм, социализм, национализм и т.д., лежат и описательные, и нормативные идеи, в то время как «узкие» идеологии основаны только на описательных идеях. В результате анализа отдельных концепций популизма и цинизма выявлен ряд общих и различных пунктов между анализируемыми идеологиями.

Ключевые слова: *идеология, "широкая идеология", "узкая идеология", популизм, цинизм, элита, народ, "молчаливое большинство"*

LEVON BABAJANYAN – *Comparative Analysis of the Definitions of Populism and Cynicism as “Narrow” Ideologies.* – The article considers populism and cynicism as “narrow” types of ideology. The “broad” ideologies, such as liberalism, socialism, nationalism, and so on, are based on descriptive and normative ideas, while “narrow” ideologies are based only on descriptive ideas. As a result of the analysis of some ideological concepts of populism and cynicism, a number of common and different features were identified among the analyzed “narrow” ideologies.

Key words: *ideology, “full” ideology, “thin” ideology, populism, cynicism, elite, people, “silent majority”*

Ներկայացվել է՝ 13.01.2020
Գրախոսվել է՝ 06.02.2020
Ընդունվել է տպագրության՝ 25.07.2020